զեղեցիկք առնելով ուրախանային և փափկանային։ Եւ յորժամ հողմն սաստիկ ուժգնակի յանկարծակի հընչեաց, այսպէս ի վայր մնալով կորեան, բայց պրծաւ վալիտէն ի բազում լալոյ թագաւորին թէ Վասն Աստուծոյ զմայրիկն իմ ինձ բաշխեցէք։ Եւ հողմն հընչեաց ի նոսա և յայս Մուլքի պուլաս, որ այժմ ոչ աղքատ և ոչ տնանկ, ի փառացն մերկացեալ և ոչ օրինաւոր մահ զիպեալ, այլ սաստիկ պատժիւ պատուհասեալ ի փախստեայ տեղիսն թէ Գուցէ ազատիցիմ. և ոչ եղև հնար, այլ խեղդամահ արարեալ և այն ոչ եւս կորուսեալ, այլ բերեալ ի մէյտանն եւ կախեալ խայտառակօրէն և մեծաւ նախատանօք ի տեսիլ ռամկաց և ամենայն քաղաքիս։

Յետ պահու մի եւ ոչ մի ժամու սուպաշին ըմբռնեալ զԴ ծառայսն Մուլքիին, և այն որ աւագագոյնն էր, ասացին՝ թէ քէհեան է նորին, ի տեղ բանկոնին աթլազ զգեցեալ[1]), գոյնն թարշամեալ, ուժն նուազեալ, գեղջն թառամեալ և ոչ կարէր զաչսն եւս բանալ, զի երբեմն բանայր և երբեմն խփէր, որ Բ ծառայքն յերկու գիհն մտեալ, ի բազկացն վերացուցեալ տանէին ուշիկ, և առաջի երթայր սուպաշին և տարան ի վէզիրն որպէս թէ հարցաքննեսցեն զինչս Մուլքիին։ Եւ աւուրքս թագաւորն խէտիշէրիֆով մարդ ուղարկեաց ի Միսիր՝ թէ զաստի գնացեալ ներքինի սեաւքն բազում դրամ և գանձ են ըստացեալ, զամենեսեան սպանէք և զգանձն առ իս բերէք։

Եչի օրս (28 Փեբր.) օլօֆէն ելաւ յըսպահոցն՝ զուռուչ։ Եւ մունետիկն կրկին կու կանչէր թէ Ով որ զփախուստ մարդիքն ըմբռնէ եւ բերէ, նա՛ թագաւորն բազում փառաց կու հասուցանէ. և մարդ եդեալ էին յամենայն կողմանց և որոնողք ընդ ամենայն տե-

1) ըսգեցեալ.